

## **Գեղարքունիքի մարզպետն հերթական աշխատանքային այցով Վարդենիսի տարածաշրջանում էր**

11.06.2015

Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը հունիսի 10-ին հանդիպում ունեցավ Վարդենիսի տարածաշրջանի Շատջրեք, Գեղամաբակ, Այրք, Վերին Շորժա, Ներքին Շորժա համայնքներում: Շատջրեք համայնքում Գեղարքունիքի մարզպետը հանդիպում ունեցավ համայնքի բնակիչների հետ՝ վերջիններիս հնարավորություն տալով ներկայացնել համայնքային բնույթի առաջնահերթ խնդիրներ: Շատջրեքցիները և համայնքի ղեկավարը խոսեցին գյուղատնտեսական աշխատանքների և ակնկալվող բերքի մասին, առաջ քաշեցին գյուղատնտեսական տեխնիկայի պահանջարկի, կաթի մթերման ցածր գների, համայնքային կենտրոն և հանդիսությունների սրահ ունենալուն վերաբերող հարցերը: Նրանք ակնկալեցին մարզի ղեկավարի աջակցությունը հարևան համայնքի արոտավայրերից՝ պայմանագրային հիմունքներով օգտվելու խնդիրը կարգավորելու գործում: Մարզպետը խորհուրդ տվեց կաթի մթերման ուղղությամբ օգտվել Ակունքի 'Էկոկաթ' ձեռնարկության ծառայությունից, որը կաթի մեկ լիտրը մթերում է ոչ թե 90 կամ 100, այլ 120 դրամով, իսկ արոտային տարածքներ վարձակալելու հետ կապված խնդիրը, ըստ մարզի ղեկավարի, հնարավոր կլինի կարգավորել միայն մարզպետարանի համապատասխան աշխատանքային խմբի կողմից կատարվելիք ուսումնասիրություններից հետո: Շատջրեքում Ռաֆիկ Գրիգորյանը ծանոթացավ նաև միջնակարգ դպրոցի շենքի անմխիթար վիճակին: Դպրոցի գրեթե վթարված տանիքից անձրևաջրերը ամբողջովին ներս են թափվում, քայքայելով ողջ կառույցը: Մարզի ղեկավարի կարծիքով, նման իրավիճակում իրենց մեղքի բաժինն ունեն նաև դպրոցի տնօրենն ու համայնքի ղեկավարը, քանզի փոքր ծավալի խնդիրները կարելի էր ժամանակին կարգավորել: Մարզպետը խոստացավ միջոցներ գտնել դպրոցի մի մասնաշենքի մասնակի վերանորոգման համար, ժամանակավորապես այնտեղ տեղակայելով դպրոցն ու համայնքայի կենտրոնը: Գեղամաբակ, Այրք, Ներքին և Վերին Շորժա համայնքների բնակիչներն առաջ քաշեցին խմելու և ոռոգման ջրի բացակայության խնդիրները, խոսեցին կաթի մթերման գներից: Այրքում եւ Ներքին Շորժայում մարդիկ դժգոհեցին ճանապարհների անբարեկարգ վիճակից: Մարզպետը նշված համայնքների կաթ արտադրող տնտեսություններին ևս խորհուրդ տվեց համագործակցել Ակունքի 'Էոկաթ' ձեռնարկության հետ՝ նկատի ունենալով մթերման համամատաբար բարձր գինը: Անդրադանալով Գեղամաբակի եւ Այրքի խմելու ջրատարների նորոգման կամ կառուցման խնդիրների՝ Ռաֆիկ Գրիգորյանը նշեց, որ աշխատանքներ են տարվում դրանք գյուղնախարարության կողմից իրականացվող համապատասխան ծրագրում ընդգրկելու ուղղությամբ, իսկ Ներքին Շորժայի խմելու ջրի հարցի շուրջ որոշում կկայացվի լրացուցիչ ուսումնասիրություն կատարելուց հետո: Մարզի ղեկավարը խոստացավ միջոցներ

գտնել՝ Այրք-Վերին Շորժա-Ներքին Շորժա ճանապարհների մասնակի հարթեցման  
և բարեկարգման համար: